

Մի քիչ մոխիր

Ինչ լավ ընկա.

հայելու առջև այտիս ու արմնկիս վերքերը յոդով մշակելիս Ջակոմետիի պատմությունը հիշեցի: Մի գրքում էի հանդիպել՝ ինչպես միշտ ներշնչելով, թե իմ մասին է: Ջակոմետին մեքենայի տակ է ընկնում, կոտրում է ոտքը, երբ պատգարակում են, թեթևացած շունչ է քաշում՝ «Ինչ լավ էր՝ գոնե մի բան եղավ»:

Ինչ լավ էր՝ ընկա.

հեծոն մի կողմ, ես ուրիշ կողմ: Դասական անկում էր՝ զրխկոցը տեղը, գետնահամ, ձգողական ուժի ներգործությամբ: Ամեն ինչ կար՝ և՛ անկյունաձևյան դիրք, և անիվներ՝ օդը թրմող արծաթաթել ճաղերով, և՛ պեղալներ՝ դեռ հավատարիմ պտտման ուժին, և իջնելու զարմանք, որ իջնում ես և՛ էլի իջնում ես, փաստորեն իջնում ես, մի բան, որ ժպտեցնում է քեզ մի տեսակ անվերաբերելի, շնորհակալության հաճույքից ապուշացած ժպիտով, և, իհարկե, հին ու բարի գրավիտացիա, որ հավատարմորեն մեզ աշխարհ է վերադարձնում: Օրն ավարտվում էր, ու խտանում էր Շթարնբերգ լճի ծովակաթի լույսը: Դեմքս տեսնելուն պես Վոլֆգանգը, իհարկե, կռահեց՝

– Լավ; հեծանվից: Էլի շղթան է՞ր: Ոնց որ կոտորակավոր փամփուշտ կպած լինի, մեր ավազի փափուկ տեսքը խաբում է, դանակ է, գնա փայտացման դեմ սրակվի:

Ես նրան պատմել էի՝ հայրս վիրաբույժ էր, բուժաշխատողների աշխարհում եմ մեծացել, ասացի՝ ինչ պետք է, արել եմ, բժշկի դիմելու կարիք չկա, որովհետև հայրս ինձ վերքեր մշակել սովորեցրել է: Մի փոքր ստում էի, նա հատուկ չէր սովորեցրել, ես ինքս էի ուսանել: Կեսգիշերին լվացքատանը Կլաուսի հետ զրուցելիս հասկացա՝ հիմա ինչ-որ բան կմեռնի: Ու հիշեցի: Բանջարանոց թաղամասի հետնաբակերից մեկում մատաղի աքլորը կապաթելից պոկվել, կծել է Սեդուկի դունչը: Հայրը, մայրը, քեռին, քեռու ռազվադնոյ կլուչը, քեռակինը, քեռակնոջ տալը, քեռակնոջ տալի գրկի երեխեն, երեխու գրկի քաչալ բարբին, Կրիշնա Լուսիկը, հոքուրը, հոքուրի «Եփրեմվերդին», հոքուրի մարդու մոտիկ ընկերը, դրկից Սլավը, Սլավի կինը՝ Նունոն, Նունոյի սրտի կապլիները Սեդուկին բերել, պանկեցրել են մեր հյուրասենյակի դիվանին, սաղ տունուտեղը գրավել, սպասում են: Բժիշկը հայրս է, նա հակվել է երեխային, ձեռքի «Medic Tincture Iodine» պիտակով շշիկը շրջում է, դրա բերանին սեղմած բամբակը յոդով է թրջում: Սեդուկի դնչին կծատեղը նուրբ

է: Աքլորն ասես զոջալով է կծել՝ մահվան դիմաց գոնէ միագիծ այս չանգովածքը, որից նույնիսկ հետք չի մնա: Յոդով վախվորած բամբակը շարժվում, վախվորած հավում է վերքին, հետ է քաշվում վախվորած: Սեղուկը քաջ է: Եվ քաջ է վախվորածը: Նրանք զրուցում են, հայրիկը հարցնում է՝ «Չէ, չէ՞»: Եվ Սեղուկը պատասխանում է՝ «Չէ, չէ»: Կիսաբաց դռան մոտ կանգնած՝ մտքիս մեջ նրանց եմ կրկնում ու մեռած աքլորին համոզում, որ կծի ինձ:

Վաղուց չէի ընկել, մանավանդ հեծանվից: Ու հիմա Բավարիայի Der MörchenΦոնig արքա Լյուդվիգ II-ի անտառներում հանկարծ ինքս ինձնից օգնություն եմ խնդրում, անտառներում խելագարված Լյուդվիգի կանչերը իբր թե նմանակելով՝ արդեն քանի օր է Շթարնբերգի ափն ի վար հեծոյիս հետ կռիվ եմ տալիս ու վերջապես պարտվել եմ ուզում: Չէի հավատում, որ մեկընդմիջտ կորցրել եմ հեծանիվ վարելու կարողությունս: Այնպես ինչպես տասներկու տարեկանում էի վարում; դրանից թեկուզ կեղծ կարեկցանքի համար ձևականորեն թողնված փոշու մի հատիկ չէր մնացել: Մինչդեռ ուրիշ բանում էի համոզված: Վարելու ընթացքում էլի նույնն էր՝ խամությունն ու անկարողությունը վայելելու փոխարեն նստատեղի կաշվին տգրուկավարի կպած՝ հեծանիվը աղետի սպասումով էի բարդում: Հեծանիվ վարելիս երբեք չգիտես՝ աղետից ես փախչում, թե դեպի աղետն ես գնում: Իսկ ես, որ ուրիշ տեղում էի, հմտությունս հետ բերելու անհամբերությունից թեթևություն էի փնտրում: Երբ վերագտնում էի, փորձում մարմնիցս պոկել, ուղղակի թիակներս էին ցցվում, որ մեռած փոխաբերություն էր ու պատկերվում էր այսպես՝ ճահճացած ջրում դար առաջ վարսված գերաններ, որոնց նեղուցով նավակներ են լողացել և ձկներ են լողացել:

Այդ ժամանակ էր, որ հանդիպեցի Վոլֆգանգին: Հեծանիվիս հետ նավակայան էինք հասնում, երբ եկավ, հավասարվեց մեզ ու հեծոյի չիկչիկոցին նայելով՝ թնդանոթերեն ասաց.

– Թե դեմ չես, շոթան տեղը զցեմ:

Սզբում չհասկացա; կրկնեց այն լեզվով, որը գիտեի: Անտառի խորքերում պախկված՝ մի ժամ տառապել էի. հեծոյի դուրս թռած շոթան, որ պարտավոր էր հագնել աստղի ատամներին, ամեն փորձից հետո սպանված ու կծիկ եղած յուղե մկանն էր թալկացնում: Երբ Վոլֆգանգի հետ մտերմացել էինք, հիշում էր.

– Գիտե՞ս ինչ արագություն էիր հավաքել: Հաճարենիների շարքերում անտորո թեքությունից իջնում էիր ուղիղ դեպի լճափ, մարդկանց մեջ: Աչքերդ փակ էին:

Ճամփեզրին կանգնեցինք: Վոլֆգանգն ինչ սիրուն արեց, ընդամենը տարածության ու հպման գիտակցում, իրական առ իրական, որ խաչավոր շարժումով զննեց հեծանիվը, շարժընթաց պեդալեց, շղթան համաչափելով տեղը գցեց, շոյեց անվահեծերի փոշին, սղմրտեց դողերը, ստուգեց օդի ճնշումը, արգելակները փորձարկեց, զեղչեց մինչև երկինք հասցրած նստատեղը, խնդրեց փորձել: Փորձեցի:

– Ընտիր է: Չքշես:

Եթե սա քսաներորդ դարին հատկորոշ գործ լիներ, հավանաբար, Վոլֆգանգին որոշ բաներ չէի բացահայտի, գաղտնիքներ ու սառույցների տակ համրացած ասելիքներ կթողնեի: Բայց ոչ սա էր գործ, ոչ էլ մենք էինք հերոսներ, նույնիսկ իմ ու Վոլֆգանգի ետևում կանգնած հեղինակը՝ Սևը, որ ճակատիս ասել էր՝ «Դու մարդ ես ման գալիս, որ աղետիդ համար ների քեզ, ների մի գործի ու մի կյանքի համար, ուր էլ ոչ մի բան տեղի չի ունենում, որի հետ էլ ոչինչ չես անում», ու խնդրել էր, որ չզանգեմ-չգրեմ իրեն: Իսկ երբ Վոլֆգանգի հետ մտերմացել էինք լուսաբացին Շթարնբերգի լճափով սուրող հեծանվորդների ժպտանցիկ մտերմությամբ, որի հետևից թուրթակի փետուրներին վայել հանդերձները գույներ էին հրդեհում, չդիմացա, ասացի.

– Հեծանիվ վարել; ու ընդհանրապես էլ ոչ մի բան չի ստացվի: Ես մենակ աղետի եմ սպասում: Հեծոյի դեկը չբռնած՝ մտածում եմ՝ կործից կջարդվի, մեկին կճզմեմ: Պանելային շենք տեսնում՝ երկրաշարժ եմ պատկերացնում: Դպրոցն ավարտող տղաները բանակում կսպանվեն: Ոչ թե վաղվա օրը չկա – չկա վայրկյան հետոն: Հայրիկին հիշել խուսափում եմ, որովհետև չեմ ուզում, որ նա երկրորդ անգամ մեռնի:

– Ինձ համար գոնե թեթև բան մտածի, հա՞ – ասաց Վոլֆգանգը, - վերջը մի դար ապրել եմ, հեծանիվ քշելուց էլ հաստատ չեմ կշտացել:

Լավ ծիծաղեցինք: Խոստացա նրան, որ դաժան չեմ լինի, իր կործանման եղանակները ավելի թեթև, ավելի տանելի կերևակայեմ, որ մեկ էլ շատ չտանջվի ու դեռ էլի հեծանիվ վարի: Իրականում Վոլֆգանգից պահեցի, թե իր համար ինչ սարսափներ եմ պատկերացրել, մեր հանդիպման հենց առաջին բռնություններին այն ընթացքում, երբ նա հեծանիվն էր նորոգում, գուցե ոչ կզարմանար, ոչ էլ տրամը կընկներ; ուրիշ էլ ինչ՝ մի դար է՝ Վոլֆգանգն ապրում է, չնայած ով իմանա: Արևից առաջ, գրեթե ամեն օր, Շթարնբերգի ափին տեսնում էինք իրար, հազվադեպ բառեր ու զրույցներ փոխանակում, ոչ մի անգամ հեծանիվը հմտորեն վարելու խորհուրդներ չտվեց և իր հսկողությամբ ոչ մի անգամ վարժանքներ չհանձնարարեց, իսկ երբ պատմեցի, թե Ֆելդաֆինգում ինչ եմ անում, ու

ցույց տվեցի ծառերով պատված բլուրը, ուր առանձնատունն էր՝ իմ կեցավայրը, ասաց.
– Զգույշ; կարծեմ առանձնատան մի մասը փայտից է՝ տասնիններորդ դարի գերանակապ,
հրդեհի վտանգը մեծ է: «Siemens»-ը մի քանի մետրի վրա է՝ լիքը թունավոր արտանետում:
Համ էլ՝ մոտերքում արջեր կան: Լուրջ արջեր են:

Գիշերը չքնեցի: Ֆրաու Իլսեի հոգեհանգիստը կեսօրին էր լինելու: Դեռ մինչև հեծոյից
ընկնելը որոշել էի, որ պիտի գնամ: Զգիտեմ, թե ով էր Ֆրաու Իլսեն: Ծնվել է 1925
թվականին, ապրել է Ֆելդաֆինգում, մահացել է: Ծննդյան ու մահվան արանքում
ամենաանհամոզիչը ապրելն էր թվում: Եթե նման հայտարարություններ չլինեն, երբեք չես
ասի, թե Ֆելդաֆինգում մարդիկ են ապրում: Բայց նրանք կան՝ չերանգած մազերով
տատիկ-պապիկները, անտառներում նոսր-նոսր թափառող երեխաների
հեծանվախմբերը, ամեն օր, առավոտյան սիրիացի փախստական կանայք, նրանցից մեկը՝
«Rewe»-ի մուտքից քիչ հեռվում կանգնած, մյուս երկուսը՝ սուրճի ու կրուասանի հերթում
իրար ձեռք բռնած; ու միայն առավոտյան, միայն «Rewe»-ի մուտքից քիչ հեռվում, միայն
սուրճի ու կրուասանի հերթում: Նրանք ապրելու պես կան:

Հայտարարությունը Սուրբ Հովհաննես եկեղեցու հանգուցյալների համար մատուցվող
հոգեհանգստյան պատարագի ազդերի շարքում էր, դրանք լուսանկարել էի, տանը բառ առ
բառ թարգմանելով կարդում էի: Պարզվում էր՝ Ֆրաու Իլսեի հոգեհանգիստը ոչ թե
բողոքական եկեղեցում է լինելու, այլ իր տանը, որի հասցեն ու հեռախոսահամարը
թավատառ նշված էին: Երբեք անծանոթ մարդու հոգեհանգստի չէի մասնակցել: Մի
անգամ մեր զորամասին մոտ գյուղաքաղաքում՝ գերեզմանատանը, փոս էինք փորել: Փոսը
մեր վաշտի հրամանատարի՝ իր ասելով անտեր պառաված, հեռու ազգականի համար
էինք փորում, ում կյանքում ընդամենը երկու անգամ էր տեսել: Մենք երեքս ոչինչ
չտեսանք: Սակրավորի կարճկոթ բահերով պատրաստ սպասում էինք: Բերեցին փակ
դագաղով: Իջեցրինք: Հող տվեցինք: Վիլիսի մեջ հրամանատարը մի քանի անգամ կրկնեց՝
«Էս մարդը գոհ կմնար», մեզ «Davidoff» ու պերանիկ բաժանեց:

Վոլֆգանգից անցողակի հետաքրքրվեցի՝ գիտե՞ր Իլսե Մենինգին: Որ մահացել է:
Ֆելդաֆինգը փոքր է՝ գիտեր: Չէր լսել, որ մահացել է: Վոլֆգանգը նաև ասաց, որ իր տանը
ազդանշանային համակարգ է տեղադրված, տարիներ առաջ է պատվիրել: Համակարգը
մարդու մարմնի ջերմաստիճանին ու շարժումների քանակին է արձագանքում:

Ազդանշանը միանում է, տարածվում փողոցով մեկ միայն այն ժամանակ, երբ տանտերը
մահանում է ու տանը օրերով այդպես մնում: Վոլֆգանգի կատակներից բան չէի

հասկանում, երբ մտերմացել էինք, ու համաձայնել էր իսկապես գրուցել, Մյունխենի ռմբակոծության վերհուշից պատմել էր՝ «Նկուղում փակված էինք, բայց քաղաքի վրա թափվող ռումբերի պայթյուններն անդադար չստացան։ Ծարձատյուններ էին լսվում, ձայները հեղուկ լավայի նման չորս կողմերից լցվում էին մեր ականջները։ Լաց էինք լինում։ Իսկ հետո, երբ ամեն ինչ ավարտվել էր, քամին օրեր շարունակ մարդկային մսի խանձահոտի, վիրավորների հառաչանքների ու ածխամրի շերտեր էր բերում։ Այրվող շենքերի, քաղաքում բռնկված հրդեհի մոխիրը ձյան փաթիլների տեսքով իջնում էր ու իջնում։ Հիշում եմ՝ երեխաներով փորձում էինք ձնագնդիկ անել, չէր ստացվում։ Մի պահ հավատացել էինք, թե մոխիրը սև ձյուն է։ Ինչի ասես հավատում են երեխաները»։ Գուցե ես էլ նրանց պես շփոթել, բայց այս անգամ ձյան փոխարեն Վոլֆգանգի հորինաստեղծ խաղն էի գնդել՝ երեխավարի նրա ամեն բառին հավատալով, մանավանդ որ ինքն էր խոսք գցել՝ «Մեկ-մեկ թոռներիս ու ծոռներիս մոտ ինձ կիսացնդածի տեղ եմ դնում, իբր թե խորը գառամախտ ունեմ, ինչ-որ հավես խաղի մեջ եմ մտնում, ասենք հիմիկվա ինձանից էլ ավելի ցնդած թինեյջերների հետ։ Չնայած ո՞վ ասաց, թե իրոք խելքս չեմ թոցրել»։

Անձրևը դադարներով էր գալիս, ես նրան սենյակ էի հրապուրում, կիսաբաց էի անում պատուհանաշարի փեղկերը, կաթիլները ներս էին թռչում, երբ վերադառնում էի սենյակ, պատուհանագոգը, վարագույրի փեղերը անձրևով էին լինում։ Ջուրը կուտ-կուտ հավաքվում էր պատուհանագոգի ծալքերում, որոնք տարեց տարի էին գոյացել։ Ծլեփ տված հին ներկաշերտի վրայից ամեն անգամ նորն էին քսել վրձնի մազափնջից ծորած ներկի արագ ու անտնտես հարվածներով։ Ծալքերում փոշու ու սարդի ալրացած գերեզմաններ կային։ Դրսից Կլաուսը նկատել էր, զգուշացրել, որ անձրևի ժամանակ պատուհանները փակ պահեմ՝ հիշեցնելով, որ եթե փայտերը կամ սենյակի հատակը փչանա, դրա համար գումար կգանձեն։ Փեղկերը երեկոյան բացում էի, անջատում սենյակի լույսը, երբ անձրևում էր, հեռանում էի։ Ուղիղ պատուհանաշարիս տակ առանձնատանը պատկանող հեծանիվների կայանատեղին էր։ Որպեսզի հեծանիվ վարելու երազանքներս կրկին չարթնանան, մտքերս ջանում էի մոռացնել, հայացքս ոչ մի դեպքում ներքև չկախել; բայց միևնույն է՝ կուրացրած պատկերների մեջ նրանցից ինչ-որ բան էր մնում՝ անվաղողի կեսը, արծաթաթել ճաղերի գիշերային ալ-լուսատուն, երկաշքանի անջրանցիկ պայուսակը, հացի ու սվիտրի զամբյուղը, ակին ցեխով մածված տերևը։ Սենյակում թեփուկելով՝ պատուհանագոգի ծալքերում հավաքված անձրևաջուրը կանչում էր։ Պատուհանագոգն ու հատակը լաթով չորացնում էի, խոր ընկած ծալքերում

ջրին հասնելու համար ժամերի նուրբ համբերությունն էր պետք: Գիշերը չքնեցի, աշխատեցի մինչև լուսաբաց, հեծանիվը ներքևում էր՝ ուղիղ հայացքիս տակ:

Արթնության աքաղաղը Սուրբ Հովհաննես եկեղեցու աշտարակից նայում է այնտեղ, ուր Ֆրաու Իլսեի հոգեհանգիստն է, առանձնատունը, որտեղ ապաստանել եմ, Վերին Ֆրանկոնիայի անտառներն են, Ռոզե կղզին է, Ֆելդաֆինգի միակ փոստը, միակ գերեզմանատունը, կառամատույցը: Աքաղաղը նայում է այնտեղ, ուր վստահ է՝ աշխարհն է: Ես աքաղաղով եմ կողմնորոշվում: Ու գնացի աքաղաղով: Իլսե Մեենինգի տունը հեշտությամբ գտա, հեծանիվը կապել-փականքել չկարողացա, ձեռքով հենակի բարակ ձողը դուրս քաշեցի. հեծոն անշարժացավ, ոլորվեց ու փլվեց գետնին: Պատկած թողեցի: Տնամերձ բակի գոտկաչափ դուռը բաց էր, ներս մտա:

Ճաշասենյակում սեղանի առջև շարված աթոռներին տատիկ-պապիկներ էին նստել, գլխով բարևեցի, ազատ աթոռ ընտրելով՝ նստեցի նրանց հետ: Սեղանին հելունագործ սփռոցի վրա տանտիրուհու լուսանկարն էր, կողքին՝ ճենապակյա ծաղկաման, ջրի մեջ՝ կարճ ցողուններով ծաղիկներ: Սպասում էինք, հոգեհանգիստը դեռ չէր սկսվել: ու սպասումը շարունակվեց մի կնոջ նրբաքայլերի հետ: Նա Ֆրաու Իլսեի աճյունասափորը երկու ձեռքով գրկած՝ անհանդիսավոր ու վայելուչ ներս մտավ, սափորը սեղանի կենտրոնում դրեց, ակնթարթ կանգնեց ու հեռացավ: Մարդիկ կային, բոլորն էլ քսաներորդ դարասկզբից, որոնք քիչ անց մոտեցան սեղանին, շրջվեցին դեմքով դեպի ներկաները, տողեր խոսեցին: Առաջին շարքում նստած տատիկներից մեկը պայուսակը փորփրեց, ելավ տեղից, մոտեցավ աճյունասափորին ու ձեռքի փոքր բարձիկով, դեմքին պուղրա անելու պես, սափորը տարբեր կողմերից սրբեց: Երևի մի քիչ մոխիր էր նկատել:

Ճաշասենյակը լուսավոր էր, պատուհանները դեպի ներս բացվող ծածկափեղկեր ունեին, գոգերին նստոտել էին կողովներ շալակած զատկի ճագարները: Ինչքան ժամանակ է՝ հոգեհանգիստը սկսվել էր, ուր որ է կավարտվեր, իսկ մենք դեռ սպասում էինք: Մոխրով աղետ երևակայել չստացվեց: Ճաշասենյակի ջահը պղնձալարով գծած ձուկ էր, երկճյուղած լամպերը՝ հեղուկ ապակու կաթիլներ, որոնք ելակի պտուղներ էին հիշեցնում: Մոխրով աճյունասափորը այնքան թեթև, շնչից զրկված ու անավելորդ էր թվում, որ կարող էր և պտուղներից մեկը լինել: Կլաուսն ասել էր՝ «Տխուր է. Ֆելդաֆինգում ընդհանրապես գողություն չի լինում»: Հավատում էի, բայց անկողպեք, գետնին ընկած հեծանվիս համար սկսել էի տազնապել: Լավ, չեն գողանա, իսկ եթե մեկը շփոթի ու պատահմամբ իմ հեծոն վերցնի: Կլաուսը կասեր՝ «Տխուր է. Ֆելդաֆինգում չեն շփոթում»: Չհամբերեցի, բոպե

առաջ ուզեցի համոզվել, դուրս եկա ու Ֆրանու Իլսեյի տնամերձ բակը վազքով կտրելով՝ փողոց ելա: Հեծոն իր տեղում էր՝ իր պես գետնին պառկած, անիվների վրա կանգնեցրի ու տարա կողքով:

Կողք-կողքի քայլելով՝ հասանք Հյոհենբերգշթոլասսե: որոշեցի քշել, բարձրաձայն ինքս ինձ սրտապնդելով՝ նստեցի հեծանիվի վրա, բռնեցի դեկը, առանց պեղալելու ոտքերով հրեցի, մի քանի մետր գնաց, դարձյալ կանգնեցրի: Վերսկսեցի անակնկալ՝ պեղալի ընդամենը երկու պտույտ արեցի, մկաններս լարելով ճնշեցի, անշարժուն պահեցի. հեծոն հավատաց ինձ, առջևի անիվը ցնցեց ու մեղմվելով՝ առաջ սահեց: Նույն պահին սարսափած արգելակեցի: Ես ամեն ինչ անում էի, որ հեծանիվն ընթանար. ընթանալուն պես ամեն ինչ անում էի, որ կանգ առներ: Շարունակ նույնկերպ՝ հասա մինչև Հյոհենբերգշթոլասսեի խոզը: Որոշեցի դադար տալ: Խոզին մոտ լինելով՝ ապահով էի զգում: Ուսապարկիս միջից բրեցել հանեցի, սկսեցի ուտել: Այստեղ ինձ հանդիպած միակ բաշով խոզը, որին կիսավարտիք են հազցնում, ինչպես միշտ մարգախտոտի իր սիրած անկյունում, իր սիրած խաղալիքների հետ տափ արած էր: Ինչ տեղափոխվել եմ Ֆելդաֆինգ ու իմացել խոզին, օրվա մեջ, առանձնատան արևելյան սահմանը հատելիս՝ Հյոհենբերգշթոլասսեով դեպի վար իջնում, հարևան տան բակին մոտենալով՝ գոնե մի անգամ նրա կողքով անցնում եմ: Ամեն անգամ ողջ է լինում:

Ճանապարհի կորացող վայրէջքը, որ մղում էր սլանալու՝ դարձյալ կողք-կողքի անցանք, երբ քիչ պատահող անցորդներ ու հանդիպակաց մեքենաներ էին մոտենում՝ տարածություն ծորացնելով, միասին թլֆած էինք ձևանում: Կամ ես էի գլխովին ուսապարկը մտնում՝ ձեռքս գրպանի մթության մեջ բացուխուփ անելով, մինչև որ գալիս-անցնում էին: Մարդիկ էին, մեքենաներ էին մայթով ու ճանապարհով, իրենց համար գալիս, իրենց համար անցնում էին: Քառակողմ խաչմերուկից թեքվեցի, մտա Ֆիրնհաբերշթոլասսե, մոտ քսանհինգ մետր առաջանալով՝ ձախ արեցի: Առանձնատների արանքն ընկած մի վայրընթաց միջուղի կար, որը մեկ հարվածով Ֆիրնհաբերշթոլասսեն կապում էր Թուրնունդ Թաքսիս Շթոլասսեին: Կազմ ու պատրաստ, համոզվելով, որ ներքևից հետիոտն չի բարձրանում, հեծոյին նստեցի, կուզեկուզ փետացած իջա:

Իրականում պատատուկի միջով էի իջնում, որ ցողունները փաթաթել, փայտերից ու ինքն իրենից կառչած՝ վեր էր մագլցել, իր փիրուզե մշուշված փոշով տերևները փռել, պարիսպը երկու կողմից ամբողջովին նվաճել էր: Միջուղին ճանաչում էի, գիտեի, թե ինչ եմ անելու; Թուրն-ունդ Թաքսիս Շթոլասսե չհասած սուր արգելակեցի, հրվելով թռա ու երկու ձեռքով

բռնեցի պատատուկի խիտ մանվածքը: Հեծոն փախավ, խփվեց պարսպին ու շուռ եկավ: Պատատուկից կախված մնացի: Վտանգ վերապրած կենդանու բույսի թելերին պապանձված մարմնով՝ դարեր շարունակ կմնայի; վերևից մոտեցող ձայներ լսվեցին, արագ իջա, հեծանիվը վերցրի, շտապելով առաջացա: Անտառն արդեն երևում էր: Համբերությունս հատնեց: Ճանապարհը վայրէջքում էր, նստեցի հեծոյին ու ոտքերումս եղած ողջ ուժով անխնա պեղալեցի: Գետնից պոկվեցինք: Բարեհաջող Թուրքիսներ Շթղասսե մայրուղի հասա, արևամուտը սկսվել էր, ստորգետնյա անցումով քշեցի ու վերջապես անտառ մտա: Մի պահ դանդաղեցրի ընթացքս. հավատալու չէր, որ նման գառիթափ եմ կտրել, երջանկացած ձգեցի մարմինս ու պեղալեցի ինքնամոռաց: Հաճարենիների շարքերով, թեքությամբ դեպի Շթարնբերգի լճափը, հազարի տակ իջա: Հանկարծ հիշեցի, որ ճիշտ նույն վայրում լճափի երկայնքով մարդիկ են զբոսնում: Բացեցի աչքերս, չընկալեցի, թե նման արագությամբ, իրավիճակը չափել-կշռելով, դեկր ոնց թեքեցի, ոնց շրջադարձ արեցի ու թափ հավաքելով՝ մեկ ուրիշ, առավել կածանային երթուղու վրա ոնց դուրս եկա: Լույսը, ծառերի գագաթներին քսվելով, հեռանում էր, ճանապարհը բլրավոր էր, մերթ վերելք էի անում, մերթ իջնում էի: Ցածում՝ ինձնից գրեթե անմատչելի հեռավորության վրա, երկու ութաձև կերպարանք նկատեցի; շարժվեցին: Սկզբում երկար ու կարճ թփեր թվացին: Ավելի ուշադիր նայեցի՝ մարդիկ էին: Ոտքերս թուլացան: Ողջ մարմնով արգելակեցի:

Կիսագիտակից, պառկած տեղս ուղղվելով՝ մի կերպ նստեցի: Հեծանվորդ երեխաների խումբ էր մոտեցել ինձ: Մի քանի մետր հեռու կանգնած նայում էին: Հեծոս փնտրեցի: Ծառաբների մոտ, լրիվ գլուխկոնձի, անիվներն օդի մեջ՝ ընկած էր: Երեխաներից մեկը մոտեցավ հեծանիվիս, ուղղեց, անիվների վրա դրեց, դեկր բռնած բերեց դեպի ինձ; հիմա տեսա՝ այլանդակվել էր, առջևի անիվը ծուռումուռ ճաղերի ու պատռտած դողի շիլա էր, շղթան դուրս էր թռել աստղից: Ոտքի կանգնեցի, ծունկս ու թևս անցավազգաց եռում էին: Թոփվելով վրա քշեցի, փոքր աղջկա ձեռքից խլեցի հեծանիվս ու ծառերի արանքը ճղելով՝ գնացի: Հետևիցս եկան: Անտառը մթնեց: Ամենախիտ մասերով գնացի: Եկան: Մտածեցի՝ մթից կվախենան, չեն գա: Եկան: Հեծանիվը պառկեցրի: Ուժերս կուտակելով սպասեցի գան: Լրիվ մոտենան: Եկան: Լրիվ մոտեցան: Դեմ-դիմաց կանգնեցինք: Շրջվեցի ու վազեցի: Հեռացա: Կանգնեցի: Սպասեցի գան: Լրիվ մոտենան: Չեկան: Չմոտեցան: Շրջվեցի: Վազեցի երեխաների հետևից:

«Ֆելդաֆինգ» շարքից